Արձանագրություն N 3

ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 մարտի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Հ. Բաղինյան
Լ. Խալաթովա
Ս. Զաքոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր՝ Շ.Իսախանյան
հանձնաժողովի անդամ՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած եզրակացության և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի մասին

(Տ.Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

1.1.1 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ 8-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ <<Արվատեկ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

1.1.2 Հրավերով սահմանված ժամկետում յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերն ուսումնասիրելու արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- ***4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Ստարտկոպի>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրերում նշված չեն թղթի ձևաչափը և տպվող էջերի քանակը 5% լցվածության դեպքում:

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ և 48-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- ***8-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Արվատեկ>> ՍՊԸ-ի հայտը մերժել (հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն) և ծանուցել նույն չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Մովսեսյան>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի:

- ծանուցել <<Ստարտկոպի>> ՍՊԸ-ին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում դրանք շտկելու դեպքում ներկայացված հայտերը կգնահատվեն բավարար: Հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ընթացակագի շրջանակներում <<Մովսեսյան>> ՍՊԸ-ի վերաբերյալ Կոմիտեի կողմից ստացվել է տեղեկատվություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ՝ կրկնակի հարցում չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու և առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացնելու մասին

(Տ.Ղուկասյան)

2.1 ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները <<Ստարտկոպի>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են, իսկ 8-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Մովսեսյան>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ.Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները և գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել.

չափաբաժին 1 - <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ին,

չափաբաժիններ 2 և 6 - <<Կոմպասս>> ՍՊԸ-ին,

չափաբաժին 3 - <<Պրոֆիլայն Էռ ԷՄ>> ՍՊԸ-ին,

չափաբաժիններ 4 և 5 - <<Ստարտկոպի>> ՍՊԸ-ին,

չափաբաժիններ 8, 9, 10, 12 և 13 - <<Մովսեսյան>> ՍՊԸ-ին,

չափաբաժիններ 14, 15 և 16 - <<Էդմոնդ Ասատրյան Վիրաբի>> ԱՁ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ.Ղուկասյան)

4.1 Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել արձանագրության 3.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ.Ղուկասյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամ՝ ---------- Հ. Բաղինյան

---------- Լ. Խալաթովա

---------- Ս. Զաքոյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան